Հատկանշական է, որ «Նախադրութիւն...»-ում Դավրիժեցին ոչ միայն «Գիրք պատմութեանց»-ի կառուցվածքի յուրահատկություններն ու բովանդակային ընդգրկումներն է ներկայացրել, այլև ոճական սկզբունքները՝ հիմք ընդունելով ստույգ ժամանակագրությունը: Բայց բացի ստույգ ժամանակագրությունից, Դավրիժեցի-պատմիչին մտահոգում են նաև բազմաթիվ այլ գործոններ: Նա հոգում է, որ վկայագրված փաստն ու իրադարձությունը լինեն հավաստի, ինչպես նաև ունենան էական արժեք ու հետաքրքրեն թե՛ ժամանակակիցներին, թե՛ գալիք սերունդներին: Ճիշտ է նկատված, որ. «...պատմության մեջ չկա մի դեպք, որ իրողություն չլինի և չկրի ժամանակի համար էական լինելու պարտադրանքը»[4]: Հատկապես իր ժամանակակիցներին օգտակար լինելու հանգամանքով է պայմանավորված այն, որ Դավրիժեցին ակնհայտորեն չի խուսափում իր ժամանակը մատնող լեզվից ու ոճից, ինչը կարծես թե անհարիր պետք է լիներ հայ դասական պատմագրության հետևորդի համար: Այնինչ, նկատում է Վարագ Առաքելյանը՝ «Գեղջկական այս պարզությունը արատ է գիտական պատմագրության համար, բայց սա չի ասված 17-րդ դարի համար...»[5]:

Դավրիժեցին նաև գրող է, քանզի պատմիչի պես պրպտելով ու գտնելով անհրաժեշտ նյութը՝ նա այն առավել հաճախ մատուցում է իբրև գրականություն՝ նկատի առնելով ժանրային պատկանելության ցուցիչները, ժանրային նկարագիրը, պատումի ոճն ու լեզուն և այլն: Բավական է համեմատել ցանկացած սկզբնաղբյուր, և Դավրիժեցու պատմագրքի՝ դրան համապատասխան հատվածը՝ ըմբռնելու համար նույն իրադարձության ներկայացման գաղափարագեղագիտական տարբերությունները, ինչպես նաև նյութը գրականացնելու Դավրիժեցուն բնորոշ նրբությունները:[6]

---

4 ***Առաքել Դավրիժեցի***, Պատմություն, տե՛ս «Առաջաբանը» էջ 8:

5 Նույն տեղում, էջ 15:

6 Հմմտ., օրինակ, մեծ գաղթի Դավրիժեցու նկարագրությունը «Գիրք պատմութեանց»-ի «Յաղագս ամենափարթամ գիւղաքաղաքն Զուղայու յերկիրն